1681 թուականին Թորոսովիչ մեռաւ։

Թորոսովիչի յաջորդը, որ պիտի դրաւէր թափուր աթոռը, Յունանեան եպիսկոպոսը, Հայաստանում ընկաւ ճիշդ նոյն վիճակի մէջ, որի մէջ Հռովմում ընկել էր Թորոսովիչը։

Նահապետ եւ Եղիազար կաթուղիկոսները ոչ մի պայմանով չէին համաձայնւում թոյլ տալ նրան հեռանալ էջմիածնից եւ Լվովի համար նշանակում էին եպիսկոպոսներ, որոնց լեհ կաթոլիկ իշխանութիւնները հեռացնում էին Լեհաստանից։ Ի վերջոյ, միայն Եան Սոբեսկի թագաւորի յամառ խնդրանքների վերայ, անյարմար գտնելով մերժել*), Եղիազար կաթուղիկոսը ազատեց Յունանեանին պատուաւոր դերութիւնից եւ թոյլ տուեց, որ մեկնի Լեհաստան. եւ Յունանեանը մեկնեց 1686 թուին։

Յունանեանի Լվով հասնելուց եւ արքեպիսկոպոսական աթոռը ձեռք առնելուց յետոյ, բոլոր թիւրիմացութիւնները վերացան, բոլոր հայերը լծուեցին յօդուտ միութեան։ Նա շատ արագ կերպով կարգադրեց ընդդիմացող քահանաների խնդիրը, եւ 1691 թ. միութեան գործը աւարտուեց ո՛չ միայն Լեհաստանում, այլեւ Վալախիայում։

* * *

Իսկ յետո՞յ... Իսկ յետոյ յաջորդեց հայերի իրաւունքների լիակատար հաւասարեցում լեհ ազգաբնակութեան հետ, որի հետեւանքը եղաւ այն, որ հայերը կորցրին ներքին շաղախը. այլեւս ո՛չ մի բան չէր կասեցնում նրանց, եւ ձուլուեցին լեհերի հետ։ Կապալառուներից դարձան կալուածատէրեր, սկսեցին լեհ կալուածատէրերի հետ ապրել ընդհանուր կեանքով սկսեցին ստանալ ազնուականութեան տիտղոս ու լեհանալ։ Ծայր տուին խառն ամուսնութիւնները։ Լեհերի հետ ամուսնացող աղջիկները կորցնում էին հայութիւնը՝ տանելով իրենց հետ ամբողջովին կամ մասամբ եւ այնպիսի դժուարութեամբ հաւաքուած հայկական հարստութիւնները։ Լեհուհիների հետ ամուսնացող հայ երիտասարդները դիւրութեամբ լեհանում էին եւ խառնում-կորչում ազգաբնակութեան ընդհանուր զանգուածի մէջ*)։

Նրանք, որ այժմ հայ են համարւում եւ արձանագրուած են հայկական ծէսի կաթոլիկների շարքերում, մեծ մասամբ ո՛չ թէ կաթոլիկ դաւանութեան հայեր են, այլ հայկական ծագում ունեցող լեհացիներ, որոնք, յաճախ, նոյնիսկ հպարտանում են այդ ծագումով, բայց եւ այնպէս մնում են հաւատարիմ զաւակներ իրենց նոր հայրենիքի։

Եւ եթէ մինչեւ այսօր Լեհաստանում մնացել են հայեր, դրա պատճառը, գլխաւորապէս, պապական աթոռն է, որը՝ դրդուած իր շահերից Արեւելքում, ուր հռովմէական եկեղեցին ուժգնօրէն աշխատում էր եւ այժմս էլ աշխատում է իրեն ենթարկել հայոց եկեղեցին, խրատօրէն պահանջում էր հայերից՝ պահպանել սեփական ազգային ծիսակատարութիւնը։ Պա-

*) Եան Սոբեսկի թագաւորը (1674–1696 թ.), հայ ժողովրդի մշտական հովանաւորն ու բարեկամը, իր պաշտպանութեամբ մեծապէս նպաստեց հայկական առեւտրի եւ արհեստների զարգացման։ Այս պաշտպանութեան իբրեւ փոխարինում, հայերը տուին Եան Սոբեսկիի բանակին երկու հազարանոց հետեւակ մի զօրամաս, Վիեննայի ճակատամարտի ժամանակ (1683 թ.), որը վերջացաւ Թուրքերի ջախջախիչ պարտութեամբ։ Բարեացակամութեամբ լեցուած դէպի հայերը նրանց հերոսական մասնակցութեան պատճառով ճակատամարտում՝ Սոբեսկին մտածեց վերականգնել Հայաստանի թագաւորութիւնը, որի մասին բանակցութիւնների մէջ մտաւ կաթուղիկոսի հետ։ Հասկանալի է, որ նման մէկի խնդիրքը կաթուղիկոսը չէր կարող մերժել։ Սոբեսկիի ծրագրի մասին կը խօսենք քիչ վերջը։

*) Դր. Անտոնի Ռոլին, հեղինակը Պոտոլի (Գալիցիայի արեւելեան մաս) շրջանի պատմութեան մի շարք գրուածքների, որոնց մէջ հաղորդում է բազմաթիւ հետաքրքրական մանրամասնութիւններ այդ շրջանի հայերի պատմութեան մասին, մատնանշում է, որ Կամենեցի շրջակայքը բաւական ընդարձակ տարածութեան վրայ չկար ո՛չ մի ազնուական ընտանիք, որի երակներում հայի արիւն չհոսէր։ Տե՛ս Dr. Anton, I. "Nowe Opowiadania Historiczne". Wartabet, Str. 153.